

Նախարարապետը եւրոպական օրաթերթի մը թղթակցին պատասխանած է թէ ինք Բեյքերս պուրկ կը ճամբորդէ իբրեւ ռուսասէր դահլիճի մը պետը, ճշգրիտ բացատրութիւններ տալու համար ռուս բարձրաստիճան անձնաւորութեանց Պուլկարիոյ քաղաքական և ելեւմտական կացութեան նկատմամբ:

Բայց կըսուի թէ Մ. Տանէվի զլխաւոր նպատակներէ մին և առաջինն է Ռուսիոյ միջամտութիւնը և աշակցութիւնը յաջողցնել Ֆրանսացի զբաղմունքներու շռջելու, որպէս զի դիւրատար ու մեղմ պայմաններով կարելի ըլլայ փոխառութիւն մը կնքել և նախարարութեան գիրքը ապահովել: Երկրորդ՝ Մակեդոնիոյ խնդրոյն կարգադրման համար ռուսիոյ միջամտութիւնը հրաւիրել: Որովհետեւ, կըսեն, այդ խնդիրը մինչեւ որ չի կարգադրուի չէ կարելի Պուլկարիոյ Մակեդոնացիները հանգարտեցնել և խաղաղութիւնը ու կարգապահութիւնը ապահովել: Երրորդ՝ կըսուի նաեւ թէ Տօքթ. Տանէվ պիտի ջանայ Ռուսիոյ հաճութիւնը ստանալ Պուլկարիան անկախ թագաւորութիւն մը հռչակելու համար, որով Պալքանի երեք փոքր Սլաւ կառավարութեանց մէջ Պուլկարիան առաջին գիրքը գրաւելով, յառաջիկային կարող ըլլայ սլաւական դաշնակցութիւն մը կազմել Սերպիոյ և Գարատաղի հետ: Զորքով՝ կըսուի նաեւ թէ Մ. Տանէվ պիտի աշխատի Ռուսիայէ թոյլտուութիւն ստանալ Պուլկարիոյ գործոն բանակը պզտիկցնելու, ծախքի խնայողութեան համար, բայց ի փոխարէն որոշ ապահովութիւններ ստանալով ռուսէն պաշտպանուելու: Վերջապէս այս կարգի շատ մը կարծիքներ և յոյսեր կը յայտնուին Յանքովիտներու կողմէ նախարարապետին ճամբորդութեանը

առիթիւ: Իսկ ընդդիմադիր կուսակցութիւնը մեծ յաջողութիւններ չի սպասեր այդ ուղեւորութեանէն: Մանաւանդ ասոնք նկատել կուտան թէ Ռուսիան այս միջոցիս Պալքանեան երկիրներու խաղաղութիւնը և սրաքոռ-քոն խանգարել չուզեր:

Ո՞րք ճիշդ է: — Այդ գէպերը ցոյց պիտի տան:

ԳՈՒՐԴԵՅ

ՄԱԿԵԴՈՆԻՅԱՆ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

Պիթօլիայէ Մարտ 12 թուականով գրուած նամակէ մը կը քաղենք հետեւեալ տեղեկութիւնները:

Մակեդոնիոյ, մանաւանդ Մանատրիի նահանգին մէջ կացուցութիւնը խիստ չփոթ ու վրդովիչ է: Հակառակ թուրք կառավարութեան ձեռք առած խիստ միջոցներուն, յեղափոխական յանձնախումբերը (գօմիթէ) յախուռն գործունէութիւն մը ցոյց կուտան և կը դրդեն քրիստոնեայ ժողովուրդը ապստամբութեան:

Իսլամ ոստիկանութիւնը խստիւ կը հետապնդէ զրգոյնները: Այս ժամուս միայն Պիթօլիայի մէջ 400է աւելի Պուլկարներ ձերբակալուած ու բանտ նետուած են: Հարցաքննութիւնք և ճշումներ ամենախիստ եղանակով կը կատարուին, որպէս զի բանտարկեալները խոստովանցեն և իմանան թէ անոնց մեղսակիցները որոնք են և մանաւանդ զէնքերը ո՞ւր պահած են:

Բանտարկեալներէ շատերը ուսուցիչներ, քահանաներ և երեւելի պուլկարներ են: Բայց թուրք կառավարութեան ի գործ դրած այս խիստ միջոցները հեռի են յեղափոխականները վախցնելէ, ընդհակառակը անոնք կը կրկնապատ-

կեն իրենց ցործունէութիւնը քրիստոնեայ ժողովուրդը յուսահատ կուրծի մղելու համար:

Յեղափոխական Յանձնախումբերը գաղտնի լայն կանոնաւոր կերպով պուլկարներէ թերթ մը կը հրատարակեն, թղթի լայնութիւնով տպուած, Օռլիմիէ «ի զէն» անունով: Այս թերթին վերտառութեան իւրաքանչիւր գիրք մէյմէկ տեսակ զէնքի ձեւ ունի, այսինքն ատրճանակ, խանչէր, դաշոյն և այլն: Առաջին երեսին վրայ երիտասարդ կնոջ մը պատկերը գծուած է, աջ ձեռքովը կը բռնէ դրօշակ մը, որուն վրայ գրուած է «Ազատութիւն կամ մահ»: և պատկերին տակը՝ անկցի՝ բռնուրիւնը:

Թերթը ապստամբութեան կոչով մը կը սկսի, ըսելով թէ ոչ մէկ ազգ առանց յեղափոխութեան իւր ազատութիւնը չէ գտած: Կաւելցնէ թէ Մակեդոնիացիք միայն իրենք իրենց վրայ վստահելու են: Ռուսիան, կըսէ, Պուլկարիան ազատեց, բայց ի վարձատրութիւն Պեսարաբիան ինք գրաւեց: և եթէ մենք ալ շարունակենք անոր աշակցութեան վստահիլ, նա վերջապէս Պուլկարիան, Բուլէրին և Մակեդոնիան միասին պիտի կլլէ:

Այդ յեղափոխական օղակները կը յարձակի նաեւ միւս պետութեանց դէմ, որոնց թէ՛ անտարբերութիւնը և թէ շահամուտութիւնը կը դատապարտէ:

Յանձնախումբերը իրենց թրքախառնութիւն մէջ ամեն միջոց ի գործ կը դնեն նպատակուն հասնելու համար, բռնի դրամ կը հաւաքեն, իրենց արգելք եղողները կը սպաննեն: Անոնք վերջին չորս ամսուան մէջ երեսուն սպանութիւններ գործեցին: 12 թուրքեր սպանեցին որոնք քրիստոնեաներու չարիք հաւուցած էին: 14 պուլկարներ՝ որոնք երեքը կին, մատնութեան պատճառաւ սպանուեցան, և չորս Ռուսիայէ՝ որք դրամ տալ չէին ուզած կամ կառավարութեան մատնած էին:

ԹԻՍՎԱՐՏԸ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՌԵՍ ՄԷԼԻՔ

Վանականը գիւղացիի մը առաջնորդութեամբ, կէս գիշերուան մօտ Ա... գիւղը խառն, որ քաղքէն... ժամ հեռաւորութիւն ունի եւ վանի ամենէն գնդիցիկ գիւղն է:

Առաջնորդող գիւղացիին լայն ու անկանոն փողոցներէ անցնելով կանգ առաւ բարձրահայեաց ու երկու յարկի վրայ շինուած տունի մը առջեւ:

— Աղա՛, աս է մեր Ռէս Մէլիքին տունը, ըսաւ բարեմիտ գիւղացիին ցած ու յարգալի ձայնով մը:

Ու երկու անգամ պարտէզին դուռը դարկաւ:

Ինչ յետոյ դուռը բացուեցաւ: Սեւ միւս վրայ երեւցաւ քառասունն անցած, միջահասակ, ծաղկաւեր կերպարանքով, կուրտ գլուխով, մեծափոր ու նեղաւոր մարդ մը, որուն ձեռքը հոգէ ճրագ մը կար: Այս մարդը գեղին գործակատարն էր, — այսինքն Ռէսին օգնականը, — որուն Գալի առուն կուտային:

— Տղայ Միլիկ, դուն ե՛ս, հարցուց մեծափոր Գալիը՝ զարմանքով մը անծանօթին վրայ իր պզգամիւկ նայուածքը պտտցնելէ ետքը:

— Ես եմ, Ձաքօ՛, պատասխանեց Միլիկ: Ռէս աղէն քնո՞ւկ է:

— Քնուկ է... Ի՞նչ կայ... բարին էլին... նկատել տուաւ Գալի Ձաքօ անհանդարտ եղանակով մը:

— Քնա՛ ձէն տուր... ասա՛ որ քաղքէն մարդ է կեր է, հասկցա՞ր:

— Իսկ ո՞ւր... միմոաց Գալի Ձաքօ ապուշ ծամածռութեամբ մը, ո՞վ հոգի ունի որ Ռէս աղին ձէն տայ... թո՛ղ լուսնայ, յետոյ:

— Ի՞նչ կասես, մարդ Աստո՛ւ, դուն ծոա՞ր... մի՛ տնտնար, դե՛ս՝ ձէն տուր, գոչեց Միլիկ զրեթէ բարկացած:

Գալիը չնակաւեցաւ: Անմիջապէս ներս գնաց ու իմաց տուաւ Ռէս Մէլիքին, որուն հրամանին համաձայն Գալիը վերադարձաւ ու վանականը մաքուր սենեակ մը առաջնորդեց: Միլիկն ալ ախոռին թառման գնաց պատկելու:

Վանականը քառորդի մը չափ մինակ մնաց: Յետոյ սենեկին դուռը բացուեցաւ:

Ներս մտաւ բարձրահասակ, յիսունի մօտ տարիքով, լայն ու ճաղատ ճակատով, յաղթանքաւ, համակրելի դիմագծերով, տոգոյն բայց դրաւիչ արտայայտութեամբ ու քաղցրաբարոյ նկարագրով անձ մը: Այս անձը Ռէս Մէլիքն էր:

Քանի որ տարիներէ ի վեր Ռէսու թեան պաշտօնին կոչուած էր եւ երբեք օր մը չէր եղած ուր գեղացի մը իրմէն ցաւ յայտնէր: Ո՛չ միայն իր ընդարձակ գեղին հրեշտակն էր ան, այլ չընկալած գեղացիներն ալ իր անունով կը պարծենային:

Հորմէն մնացած ժառանգութիւնը մեծ էր: հետեւաբար բարեկեցիկ կեանք մը կը վարէր: Ժամանակին քաղաքը

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԱՐԻՉ, 24 Մարտ

ԲԱՐԻՉԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

Մօտ երկու շաբաթներէ ի վեր, Բարիչի հայ ուսանողները շաբաղական մէկ երկու ժողովներ կընեն Բարիչի սրճարաններէն մէկուն մէջ: Այս հաւաքումներու նպատակն է երկու ուսանողներ ընտրել իր պատգամաւոր եւ զրկել ժընէվ կազմուելիք հայ ուսանողական կոնկրէսին մէջ թիւ կազմելու:

Մեզ կիմացնեն թէ երկու դրոշն եկող՝ պարոններ, խիստ ոգեւորուած այդ ժողովներուն հոգին կը կազմեն եւ նոյնիսկ անոնց դրժմաբայ դա հաւաքումները տեղի կուենան:

Անշուշտ գաղափարը շատ գեղեցիկ է եւ մենք շատ լաւ կըմբռնենք որ բոլոր այն քաղաքներն որոնք հայ ուսանողութիւն մը ունենալու բաղդն ունին, զրկեն իրենց ներկայացուցիչները: Կը հասկնանք որ Բերլին, Լայպցիկ, Միւնխէն, ժընէվ, Նանսի, Մօնթելիէ, Եւն, ներկայացուցիչներ զրկեն տեղի ունենալիք ուսանողական Դոնկէսին, որովհետեւ կը կարծուի հեռուէն—եւ մենք կը սիրենք հաւատալ—թէ այդ քաղաքներու մէջ հայ ուսանողութիւն կայ: Դժբաղդաբար նոյնը կարելի չէ այլեւս Բարիչի համար ըսել: որովհետեւ այսօր Բարիչի մէջ եթէ դեռ մի քանի ուսանողներ կան, ցիրուցան, ուսանողութիւն չկայ, այսինքն ուսանողական մարմին մը, ուժ մը գոյութիւն չունի: Եւ ասոր պատճառը շատ պարզ է եւ հասկնալի: ուսանողութիւն այնտեղ կրնայ միայն գոյութիւն ունենալ ուր բաւական թուով ուսանողներ (կանոնաւոր եւ ազատ) կան եւ կը սիրեն իրարու մօտենալ, իրարու հետ չփռել: ամէն կարգի գաղափարներ փոխանակել, վիճել, վիճաբանել եւ ի հարկին միասին գուարճանալ, քէֆ ընել (•):

Արդ Բարիչի մէջ այսօր ոչ հայ ուսանողներ կան—լայն մտքով խօսելով—եւ ոչ ալ եղածներն՝ իրարու մօտենալու միջոցն ունին: Ո՛ւր հաւաքուին—կեղբորհասակի մը չունին, եւ արդէն տասը հոգիի համար կեղբորհասակի մը ունենալը թէ անտեղի է եւ թէ բաւական սուղի կը նստի: Սրճա-

խրկուած էր ուսում առնելու, եւ ինչ որ կրցած էր սորվիլ՝ բաւական եղած էր իր աղիւսը զգացումներուն ու ձեռք-սուղիներուն համեմատ գործելու:

Իր կինը մեռած էր: Իրեն կը մնար մէկ հատիկ աղջիկ մը, Տիւրպար առնունով, որ հաղիւ տասներկու տարեկան կար:

— Բարե՛ եկած էք, զաւա՛կս, ըսաւ Ռէս Մէլիք հայրական անկեղծ հոգածութեամբ մը:

— Բարե՛ տեսանք Ռէս Աղա, պատասխանեց Վանականը:

Ու ծոցէն թուղթի ծրար մը հանելով Ռէս Մէլիքին ներկայացուց: Ռէս Մէլիք բացաւ ծրարը, կարդաց իրեն յանձնարարական նամակին պարունակութիւնը:

Գլխուս վրայ տեղ ունիք, զաւա-կըս, չնչոցն Ռէս Մէլիք յարգալից ձայնով մը: Ուրախ եմ որ ձեզի պէս ազգասէր անձերու հետ կը տեսնուիմ: Գալով հարկ եղած միջոցներուն, վաղը կը կանչենք սեր Տէր Օհան ու տիրացու Սիմօնը, կը խորհրդակցինք ու անկէ ետքը կը գործենք: Աղէկ չըւար:

րան հաւաքուին—բայց սրճարանի մէջ մի բան խմելու է եւ գինը վճարելու, որը 30էն 60ի կը նստի, իսկ ուսանողի, մանաւանդ հայ ուսանողի գըրպանը միշտ ծակ է եւ իւր կարողութենէն վեր է միշտ 30 կամ 40 սանդղիմ վճարել: Ծաշարան հաւաքուին, —մեր ուսանողներէն քանի՞ն ճաշարան կերթան, անոնց համար շատ աւելի շահաւոր է քիչ մը ուտելիք գնել եւ իրենց սենեկի մէջ ճաշել: Համալսարանի կամ դպրոցի մէջ իրարու հանգիպին, —բայց չէ որ մէնքը միեւնոյն դասախօսութեան չեն հետեւիր: Իրարու սենեակ հաւաքուին, —բայց չէ՞ որ, ընդհանուր առմամբ, Բարիքի ուսանողական սենեակներն աւելի խցիկներ կամ լաւ եւս ծակեր են, ուր գուցէ երկու հոգիի տեղ գտնուի, բայց երբորդի եւ չորրորդի մը տեղ ճարելու համար ֆիզիքական հրաշք մը գործելու է, ուրեմն այսօրուան օրս, Բարիքի քանի մը հայ ուսանողներն իրական միջոց մը չունին իրարու հանգիպելու եւ կազմակերպուելու: (.)

Բայց այս միջոցի քանի՞ ուսանողներ կան հայ, Ֆրանսայի մայրաքաղաքին մէջ:

Որոշ եւ հիմնական տեղեկութիւն մը քաղելու նպատակով, մենք դիմեցինք երկու ուսանողներու եւ ահա մեր հարց ու փորձին հետեւանքը: Առաջին ուսանողը՝ բժշկական համալսարանի երրորդ տարին, մեզ կը պատասխանէ՝ «տասնի չափ բժշկութեան հետեւող հայ ուսանողներ կան, 15ի չափ ալ ուրիշ քանազան ճիւղերու հետեւողներ կան, որոց գրեթէ ամէնքն ալ ազատ ունկնդիրներ են եւ ոչ կանոնաւոր ուսանողներ»:

Երկրորդ ուսանողը՝ նոյնպէս երրորդ տարուան ուսանող՝ ճարտարարուեստի բարձրագոյն վարժարանի մը, մեզ կըսէ թէ «կանոնաւոր քարտ ունեցող ուսանողներ հազիւ թէ 10—12 հատ ելին, կան ուրիշ քանի մը հատ ալ որոնց ինչ լինելը յայտնի չէ»: Ուրեմն այս երկու անհերքելի վկաներու ըսածին նայելով, այժմ Բարիքի մէջ կը գտնուին մօտ քսան հայ ուսանողներ որոց միայն 10—12ը իսկական ուսանողներ են—մենք ենթադրեցինք թէ 15ը ճշմարիտ ուսանողներ են—իսկ մնացածներուն ինչ լինելը յայտնի չէ:

Եւ նկատենք որ այս դրութիւնը կը

շարունակէ երեք չորս տարիներէ ի վեր: Բարիքի հայ ուսանողութիւնը քայքայման եւ ոչնչացման վիճակի մը մէջ է եւ դատապարտուած է անդառնալի կերպով:

Աւա՛ղ, ո՛րք են այն թուականներն ու ատենները ուր Բարիքի մէջ 65էն 70 մինչեւ ութսուն ուսանողներ կը հաշուէինք եւ ասոնք կանոնաւոր քարտ ունեցող ուսանողներ: Միայն բժշկութեան հետեւողներու թիւը 40—50 էր, իրաւաբանութեան կը հետեւէին 8—10 երիտասարդներ, գրականութեան՝ 5—6, գիտութեանց եւ ճարտարարուեստի 10—15 ուսանողներ, գեղարուեստի զանազան ճիւղերուն՝ 10—12 երիտասարդներ... Ուր երբ ուսանողական ժողով մը տեղի կուսենար, առնուազն 25—30 հոգի ներկայ կը լինէին: Կը յիշեմ 1893էն մինչեւ 1897 թուականներուն, մի քանի ուսանողական ժողովներ որոց մէջ 50—70—100, մինչեւ իսկ 120—150 հոգի՝ ուսանող (կանոնաւոր եւ ազատ ունկնդիր) եւ սակաւ թուով ոչ ուսանող երիտասարդներ ներկայ եղան...:

Այդ թուականներուն եւ աւելի առաջ, Բարիքի մէջ ուսանողութիւն կար, ուժ կար եւ այդ ուժը գործեց բանախօսութիւններ սարքեց, հարցապնդումներ առաջ բերաւ, գրեց ալ ու ցախ թերթերու եւ հանգչաներու մէջ. երկույթներ տուաւ, զբոսով հաւաքեց հայերէն եւ օտարներէն ու զրկեց ուր որ անկ էր, ուր որ պէտք կը զգացուէր:

Բայց ատոնք ի՞նչ ուսանողներ էին որոնք Բարիք եկած էին 1886—1987 թուականներուն եւ աւելի դիւրութիւններ ունէին Բարիքի մէջ ուսանողներ լինելու եւ իւր այն ապրելու, թէպէտ անոնցմէ շատերուն ամսականը 10) ֆրանքէն անդին չէր անցնէր—ես ճանչցայ մի քանիսը՝ որոնց ամսականը 65—70 ֆրանք էր—բայց այն ժամանակ հայ ուսանողներու մէջ մեծ եղբայրութեան զգացում մը կը տիրէր—եւ այսինչ ուսանողն ուսանողութեան դրամով ապրելու երեւոյթը զարմանալի բան մը չէր եւ ոչ ալ մօթ մը իւր ընկերներու երեսէն ապրողին կամ ապրողներու համար...:

Այս ալ կաւեցնենք որ մեր ժամանակները հայ բարեբաւներու թիւը բաւական մեծ էր եւ մեր ընկերներէն շատերը, տեսակ մը պարծանքով կը խոստովանէին թէ Պ. այսինչն է ամ-

սական տուողը, եւ իրենց երախտագիտական զգացումը միշտ կը յայտնէին, որովհետեւ այն բարեբաւներու շնորհիւ իրենք մարդ եղան...: Բայց այդ բարեբաւները կամաց կամաց հըրապարակէն քաշուեցան՝ մոռնելով կամ սնանկանալով եւ կամ անտարբեր դառնալով:

Ֆրանսական սենեկին 94 թուականին, օտար ուսանողներու նկատմամբ քուէարկած օրէնքն անագին հարուած մը տուաւ ընդհանրապէս օտար ուսանողներու եւ մասնաւորապէս հայ ուսանողութեան: Իսկ երբ օրէնքը սկիզբին մեր աննկարագրելի ձախողութիւններ պատահեցան ուր Վերգիլիոսի ըսածին պէս՝ «մեր սիրուն դաշտերը կը թողնէք, եւ մեր հայրենիքէն կը փախչիք» եւ ամէն բան տակնուվրայ եղաւ, Բարիքի հայ ուսանողներու թիւն ալ այդ երկու հարուածներուն տակ երթալով նուազեցաւ, բարակ հաւէն բռնուած անձի մը նման սկսաւ հիւծել ծիւրել... Եւ այսօր Բարիքի հայ ուսանողութիւնը—զառն է հաստաւոր, խիստ գառնագոյն եւ ըսելը—գրեթէ հաւասար է զոռի: Իսկ այս բանը գիտցէ՛ք որ մեր դժբաղդութեանց ամենամեծն է եւ անդամանելին:

Մեղիք Ս. Դաւիթ Բեկ

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Ֆիլիպէէ մեզ գրուած նամակ մը, զոր պիտի հրատարակենք մեր յառաջիկայ թուով, կիմացնէ թէ Պուլկարիոյ Կեր. Այցելու Հովիւր ծանրապէս հիւանդ պիճակի մը մէջ կը գտնուի. այնպէս որ իր տեւողութիւնը ու յիշողութիւնը այլեւս կորսնցուցած է: Տեղւոյն ազգային կը խորհին զինքը Կ. Պոլիս փոխադրել:

—Եւրոպայի Հայ Ուսանողաց Միութիւնը՝ որ անցեալ օր Լսարան մը կազմակերպած էր Ժընէվի մէջ, ուր ատենախօսեց Հայկական խիզբոյ մասին Մ. Ֆրանսիս տը Բիւտանսէ, չըջարեալկան հրաւեր մը ուղղած է բոլոր հայ ուսանողաց ի մօտոյ Պուլկինի մէջ կազ-

մակերպուելիք Լսարանին ներկայ գտնուելու, ուր Հայկական խիզբոյ մասին պիտի ատենախօսէ ընկերվարական Մ. Ի. Պէրնաթէն, որ Ռայխստակին երեսփոխան ընտրուեցաւ: Նաեւ նոյնանման գուժադումներ տեղի պիտի ունենան Պուլքսէլի, Լիոնի և Թերեւս Հոռմի մէջ ալ:

—Նոյնպէս Հայ Ուսանողաց Միութիւնը որոշած է Մօնազօրի մէջ Ապրիլ 2—6 տեղի ունենալիք խաղաղութեան Համաժողովին ներկայանալ:

Արգէն գիտեն մեր ընթերցողները թէ յիշեալ Միութիւնը ձեռնարկած է հսկայ հատորի մը հրատարակութեան գործին, Հայաստանի եւ Հայկական խիզբոյն նուիրուած, աշխատակցութեամբ նշանաւոր եւրոպացի գրագէտներու, դիւանագէտներու և հրապարակագիրներու:

Այնքան գնահատուած վեր է հայ ուսանողութեան այս հայրենանուէր յարաճուն գործունէութիւնը որուն շնորհիւ կը յուսանք թէ կարճ ժամանակամիջոցի մը մէջ աշխարհի բոլոր քաղաքակիրթ ազգերու համակրանքը ու մեր սուրբ դատին յաջողութեանը համար անոնց աշակցութիւնը պիտի վայելենք:

—Ֆրանսայի Երեսփոխանական Ժողովին մէջ անցեալ ամիսներուն տեղի ունեցած բուռն հարցապնդումներէն յետոյ, Մարտ 3ին Գերմանիոյ Ռայխսթակին մէջ ընկերվարական կուսակցութեան առուելով Մ. Կրատնաուըր հարցապնդում մը ըրաւ կայսերական կառավարութեան: Այս առաջին անգամն է որ Գերմանական խորհրդարանին մէջ Հայոց խնդիրը կը յուզուի: 1895—1896ին Գերման Ընկերվարական կուսակցութիւնը, սրալ տեղեկութիւն առած ըլլալով, կը կարծէր թէ Հայաստանի շփոթութիւնները Ռուսական դըրուժի հետեւանք էին, ուստի միշտով չէր ուզած:

Ֆրանսական Ծերակոյտին մէջ եւս Մարտ 20ին Հայոց մասին հարցապնդում մը եղաւ:

—Երբոր կատարեալ վտանգութիւն ունիք այդ անձերու վրայ նկատել տուաւ Վանականը, կրնաք այդ կերպով գործել:

—Վտանգութիւն... այդ մասին երբէ՛ք չեմ կասկածիր: Թէպէտեւ եւ կեղեցականներու վրայ շատ հաւատք չունիմ, սակայն փորձառութեամբ կը պնդեմ:

—Խիստ լաւ. ձեր կամքը գիտէ: Այս հարեւանցի տեսակցութենէն ետքը, Ռէս Մէլիքը ներողութիւն խնդրելով «գիշեր Բարի» ըսաւ ու մեկնեցաւ:

Վանականը բոլոր գիշերը հանդարտ անցուց: Ատուռ, արեւը դեռ չծագած, Ռէս Մէլիքը Վանականին սենեակը մտաւ:

—Բարի լո՛յս, զաւակս, ըսաւ Ռէս Մէլիքը:

—Ատո՜ւր բարի՛ն, հայր, պատասխանեց Վանականը:

—Տէր Օհան ու տիրացու Սիմոն եւ կած են:

—Ուրեմն երթանք, ըսաւ Վանականը:

Ու երկուքն ալ Տէր Օհանին ու տիր-

ացու Սիմոնին քովը գացին:

—Բարո՛վ եկած էք, աղա՛, ըսաւ Տէր Օհան՝ որուն ձեռքը յարգանքով մը համբուրեց Վանականը:

Նոյնպէս բարի գալուստ մաղթեց տիրացու Սիմոն:

Վանականը շնորհակալութիւն յայտնելով՝ փափուկ միջոցներ մը վրայ նստեցաւ:

Ռէս Մէլիքը, առանց յանձնարարական նամակը միջոցով հանելու, հասկըցուց թէ Վանականին մտադրութիւնը պարզապէս կազմակերպութիւն մըն էր, թէ՛ թեմաբայ գեղերու մէջ ամեն է՛ն կարեւոր գիրք ունեցող այս գիւղը կեդրոն մը պիտի ըլլար ապագայ գործունէութեանը, եւ թէ՛ քիչ օրէն մեծ քանակութեամբ զէնքեր պիտի բերուէին ու յանձնուէին իրենց տրամադրութեան տակ:

Այս յայտնութիւնը խորին սարսուռ մը անցուց ներկաներու հոգիին մէջ: Թէ՛ Տէր Օհան եւ թէ՛ տիրացու Սիմոն Ռէս Մէլիքին երեսը նայեցան այնպիսի՝ զարմանքով մը, որ բսել կուզէին թէ երկուդալի բան է այդ:

—Ի՞նչ կըսէք, Տէր Օհան, ի՞նչ

կը մտածէք այս մասին, յարեց Ռէս Մէլիքը: Ի՞նչու լուռ կը մնաք: Դուք ալ ձեր գաղափարը յայտնեցէ՛ք:

Տէր Օհան, որ յիսունն անցած, միջանասակ, ճեփճեփմակ մօրուքով, բարեմիտ ու քաղցրաբարոյ մարդ մըն էր, իր տոգոյն նայուածքը Ռէս Մէլիքին վրայ նետեց ու գերագոյն ճիգ մը ընելով, ըսաւ:

—Ռէս Մէլիք, դուք գիտէք որ ձեր խօսքը գետին նետող մը չըլլար: Առաջ Աստուած՝ յետոյ դուք էք այս գեղին տէրը: Երբոր ձեր կամքը տաք, ո՞վ պիտի մնա՞ր:

—Եւ ինչի՞ մերժենք, Տէր Օհան, ընդմիջեց տիրացու Սիմոն զողողուն բայց հայրենատենջ ձայնով մը: Ձե՛ որ աղբին համար ամեն մարդ ձեռքէն եկանը չպիտի խնայէ:

—Քանի որ դուք կը խոստանաք ձեր ձեռքէն եկածն ընելու, շարունակեց Ռէս Մէլիքը խորապէս համակուած չեչուով մը, թո՛ղ Ամենաբարին Աստուած մեր ուխտը տեսնէ:

Այդ պահուն, Գիւր Զաքօ ներս մտաւ եւ յայտնեց թէ Միհաս Տատոյի աղջիկը փախեր աղաքէր է Գուրտերու

ձեռքէն, երկու ամիսի չափ Պէկի մը տուելը մնալէ ետքը:

—Տէր Աստուած... բացագանչեց Ռէս Մէլիքը՝ սարսուռալի նայուածք մը նետելով ներկաներու վրայ: Շուտով հոստեղ բեր, Զաքօ, մի՛ սպասիր: Գիւր անմիջապէս գնաց Ռէս Մէլիքին հրամանը կատարելու:

—Տեսէ՛ք, Ռէս աղա՛, միջամտեց Տէր Օհան, իրաւ որ Աստուծոյ պահած գառը չկորսուիր: Այս երեք ամիս է որ խեղճ աղջիկը գիւղէն փախցուցին շուները... թէեւ ամեն միջոց ձեռք առինք որ կարենայինք անոր հետքը գտնել, սակայն չյաջողեցանք:

—Բայց... չեչուեց Ռէս Մէլիքը՝ չկրնալով կարծես իր հոգին խախշացնող զառնութիւնը զսպել, ա՛հ, Տէր Օհան, ասիկա անբացատրելի նախատինք մըն է մեր գեղին համար, անպատուութիւն է կը հասկնա՞ք...

—Այդպէ՛ս է, Ռէս աղա՛, միմիջեց տիրացու Սիմոն:

Իսկ Վանականը բառ մը չխօսեցաւ:

(Շարունակելի)

ՀԱՎԱՏԻՍՍԹԸ ԲՕԼԻԹԻԳԻՅԷ

ԹԻԻՐՔԻԱ

Պուլսոս բաշանըն սիւրիւմէսի
պիր գաւորն մէսէլէսինտէն նաշի
օլտըղը Պէյ Օղլու սալօնլարընտա
րէվայէթ օլընլոր. շէօլլէ քի՝

Նազիմ բաշանըն հարէմլէրինտէն
ղայէթ կիւզէլ պիր գաւորնա Պուլսոս
բաշանըն ալագասը օլտըղը կիւզի,
Սուլթանըն սէր խաֆիլէսի Ֆէհմի բա-
շա տախի մէղպուրէ գաւորնա աշըգ օ-
լուր: Ֆազաթ գաւորն Ֆէհմիտէն զի-
յառէ տահա միւսինն օլան Պուլսոս բա-
շայը սէվմէքտէ օլտըղը սէպէպլէ, սէր
խաֆիլէ գըսգանտըղընտան Պուլսոս վէ
Նազիմ բաշալարըն ալէյհինէ իֆթի-
րալար ույտուրուպ, անլէրին պաշը-
նա շու սօն ֆէլաքէթի կէթիլիլի: Լա-
քին մէղպուրէ կիւզէլ գաւորն պիր
տահա կէօրիւնմէղ վէ նէրէտէ գաւորըղը
պիլիւնմէյօր:

Պուլսոս բաշանըն սէրհէթի պիւզ-
նէ մէճհուլ:

— Մանսուրը վիլայէթինին
Պիթօլիա շէրլինտէ 400 տէն զի-
յառէ Պուլկարար գօմիթալըգ
ճիւրմիւ իլէ մահպուս ըմըլար:
Հիւքիւմէթ թէզիքալը արթըր-
տըզնա Պուլկարար տախի ամէ-
լիաթը արթըրըլար ըմըլ: Սօն
տէօրթ ալ գարֆընտա գօմիթա-
լար գաւաղ վէ թիւրք 30 քիշի
գալթի իթմիշլէ:

— Մակեթոնիա վէ Ալպանիա
վիլայէթիլինտէ հիւքիւմ իտէն գա-
րըշըղը թէսքին իթմէք տէսի-
սէսի իլէ Պապը Ալի օ թարաֆա
եհնիտէն ասքէր կէօնտէրմէքտէ
տիր: Թիւրք հիւքիւմէթին պու-
լէտպիլի իթմիլալ ու ըսեանը
տահա զիյառէ գաւարտաճաղ վէ
խրիթիլան էհալինին զուլմը ար-
թըրաճաղ օլտըղընտան՝ Բուսիա
էլիսի Պապը Ալիյէ բրօթէսի ի-
տուպ, Մակեթոնիա վէ Ալպանիա
ճիւրմիւ եհնի ասքէր կէօնտէ-
րիւմէսինին իտտաա էլլէմիշ տիր:
Պապը Ալի ճէվապէն՝ եհնի կէօն-
տէրիլէն ասքէրլէր ամէլիաթ իճ-
րասը իշիւն օլմայուպ, եալընըղ
գարաղօլարը գուվլէթէշտիրմէք
իշիւն կէօնտէրիլտիրին պիլտիրմիշ
տիր:

— Թիւրքիա սահիլլէրինտէ վէ
սուլարընտա էճնէպի թապալարըն
ալմըղըգ իթմէլէրինին մէնն իտէն
պիր իրաւէ սուտուր իթմիշ օլմա-
սընտան տօլալը, էլլէրլէր վէ Տիւնու-
նը ումուլիյէ իտարէսի բրօթէսի
իթմիշլէ տիր:

— Հիւքիւմ վիլայէթինտէ գօրէ-
լանըն եալընմասըն մէսուլիյէթի
Սուլթան էճնէպիլէրտէն միւթէլէ-
քիլ Սըհհիյէ գօմիսիօնտա ալթի
իթմէքլէ, պիլթիւն աղալարըն աղ-
ղը իլէ եհրէրինէ տիկէրլէրին թա-
լին օլընմասըն թալէպ իթմիշ
տիր: Ֆազաթ գօմիսիօնը մէղ-
քիւրըն վէրտիկի մուֆասսալ ճէ-
վապ թիւրքիլէրին զանըն եանըն
օլտըղըն թալէլիւն իթմէքլէ պէ-
րապէր, ասըլ մէսուլիյէթ թիւրք

հիւքիւմէթին օլտըղըն կէօսթէր-
միշ տիր, եանի եհլէքէն կէմիլէրի
իլէ կիլլիտէն Հիւքիւմ սահիլլէրինէ
չըգան հաճըլարտան խապթալըգ
եալընտըղըն իսպաթ իտէյօրլար:

ՏԱԽԻԼԻՅԷ

Պուլկար-թիւրք սինօրը իւզէ-
րինտէ պուլընան Սարը թաշ նամ
քէօյտէ պուլկար վէ թիւրք
Պարագօլարը պէյնիտէ պիր
միւստէմէ վուգու պուլուպ, իքի
թարաֆտան պիր թաղըմ եարէ-
լի տիւլմիւշ վէ պիր միւլաղըմ
էօլմիւշ տիր: Պուլսոս պիր սէ-
նէ էվլէլ տախի մէղքիւր մահէլ-
տէ պիր գաւաղ վուգու պուլմըշ
ըտը:

— Բէթեքսպուրկտան Մարտ 15
թարիլի պիր թէլէկրաֆ Մ. Տա-
նէվին եհլիւմիշ օլտըղըն պիլ
տիրմիշ տիր:

— Պօրիս Սարաֆօֆըն Պուլկա-
րիտա օլընուպտէ, Թիւրքիայա
եհրիւմէք իշիւն չէթէլէր հաղըր-
լամագտա օլտըղըն տալիւ չըգ-
մըշ օլան շաէալարը Աթալիս
Պաշկար գալթիլէն եալանա չըգար-
մագտան մատա, Պուլկարիա
հիւքիւմէթինին սուլսու ասալիշի
մուհաֆազա իթմէք իշիւն լաղըմ
օլան թէտպիլլէրի էլէ ալմըշ օլտը-
ղըն պիլտիրմէքտէ տիր:

— Լազ թապիր օլընան Յակոբ
Մալխասեան իսմինտէ Տրապիզօն-
լը պիր կէնճ պիր գաշ ալլարտան
պէրու Պուլկարիանըն պաղը չէ-
հիւքիւմէթին տօլաշմըշ վէ քէնտիսի-
նէ ֆէտայի սըֆալը վէրմէքլէ
շուկու պուլու ալտաալարագ պիր
աղ բարա թօրլայապիլմիշ օլտը-
ղը հալտէ վարնայա եհլիւմըշ տիր:

Մէրքեմըն ֆէտայիլիք մաս-
քէսի պուրասա տախի պաղը սա-
տէտիլանը (միւսիտք) ալտաալարագ
անլէրին մուսվէնէթինէ նայիլ օ-
լապիլմիշ տիր: Ֆազաթ պիր կիւն
քէնտիսիլի թէալուշ վէ հիւքիւմ
իտէն քէսանըն պաղը էշեալարը-
նը շալուպ գաշմասը իւզէրինէ,
հիւքիւմէթի իսպար օլընմըշ, վէ
թանտարմա վապիլթասը իլէ եօլ-
տան կէրի չէվիլլէրէք մահպուս-
հանէյէ ալթըլմըշ տը:

Քէնտիսիլի Դաշնակցական սիւ-
սիւ վէրէն պուլ ալաղ խէպասէ-
թինէ եհնի պիր շիյիլ վէրմէք ի-
շիւն, պուլսոս 2—3 ալ էվլէլ
չէհրիւմի թիւրք մահպուսինտէ
գալթի օլընմըշ օլան պիր հօճանըն
գալթիլլէրի օլմագ իւզրէ, միւլէթ-
տաշարըմըգտան 3—4 կէնճէր
կէօսթէրիլ:

Հիւքիւմէթ իսէ մէղքիւր ճիւնա-
լիլթին իլլին պուլմագ իւմիտի իլէ
կէօսթէրիլմիշ օլան կէնճէրի կէ-
չէն ճուստէրիլթի կիւնիւ թու-
լուպ թէվլէքի իթմիշ տիր: Ֆա-
զաթ իճրա, օլընան իսթիլթագ-
տան մէրգուսանըն պիսուշ օլտըղը
թահաղըղըգ էլլէմիշ օլտագ բա-
ղար կիւնիւ սէրպէսթ պըրաղըլտը-
լար:

Մէրգուլ Մալխասեան նամ

խապիսին իսպար իւզրէ Սօֆիա-
տան տախի պիր կէնճ չէհրիւմիլէ
ճէլպ օլընմագտա իտէտէ, անընտէ
պիր գաշ սահաթ գարֆընտա պի-
կիւնաճ օլտըղը թէպէլիւն իտէ-
ճէք տիր:

Խըրսըղըգ վէ տօլանտըրընըրգ
իլէ իթհամ օլընան պիր ալաղըն
իսպարաթընա էհէմիլլէթ վէրմէք
ճալպ օլմատըղը միսիլի, օ կիպի-
լէր օլսա օլսա միլլէթտաշարընա
խըլանէթիլիք իթմէք իշիւն թիւրք
խաֆիլէսի օլապիլիլլէր: Հիւքիւ-
մէթ իշիլէ էն զիյառէ պուլ նօղ-
լմայա նաղարը տըգգաթ իթմէլի
տիր:

— Կաղէթալարըն պէյնընա
կէօրէ օգոստոստա Բուսիատա իճ-
րա օլընտագ օլան ասքէրի մա-
նէվրալարընտա հաղըր պուլընմագ
իշիւն Ֆէլա. Բրէնս Ֆէրտինանտ
հաղըրթիլլէրի Չարտան տալթիլ օ-
լընմըշ տըր:

— Քէզա հիւքիւմէթին ըսմի
կաղէթալըն Պուլկարիտան թիւրք
սինօրընա չէթէլէր կէշտիկինի
թէքզիպ իտէրէք, նիգամը տաի-
րէսինտէ հարէքէթ իթմէլլէն չիր-
քէթիլլէրին հատտըն թանըթ-
մագ իշիւն՝ հիւքիւմէթ վաղիֆէ-
սինի հէր տալիւ իճրա իթմիշ օլ-
տըղըն պէյնա էլլէմիշ տիր: Մէղ-
քիւր ըսմի կաղէթալ՝ պուլ մինա-
սիպէթլէ թիւրքիտաքի խրիս-
թիյանլարը մաղտուրիլլէթ ու մի-
զալիմէն գուրթարմագ իշիւն՝ վա-
ղիֆէտար օլան տէվլէթիլլէրին նա-
ղարը տըգգաթըն տալթիլ իտուպ,
Թիւրքիտա սուլսը իսպալ իտէն
եհքանէ սէպէպ զուլմ ու զատը
օլտըղըն կէօսթէրմիշ տիր:

Կ Ի Ր Ի Տ

1898 տէ կիրիտի թահթը հի-
մայլէրինէ ալմըշ օլան տէօրթ
պէօլիւք տէվլէթիլլէրին գարարը
մուհիպ բրէնս Եօրկիյէ սուհուլլէթ
իշիւն պիրէր միլիօն ֆրանք իս-
թիգարաղ վէրիլլէք տիր: Պուլ տէ-
ֆա Ֆրանսա մէլիսի Այանը (ձե-
րակոյտ) Ֆրանսանըն հիսէսինէ
տիւլէն պիր միլիոն վէրմէք իշիւն
հիւքիւմէթին թէքիլլէրին գապուլ
իթմիշ տիր:

Պ Օ Է Ր Լ Է Ր

Ինկիլիլլէրին Պօէր գօմանտանը
Տէլարիլէտէն 5 թօք գապթ իթ-
միշ օլմալարը պիր ֆիթուհաթ
ատտ օլընմայօր: զիրա Պօէրլէր
պէրապէրլէրինն թօք թաշըմագ
իսթէմէտիլլէրի իշիւն Լօրտ Մէ-
թուէնտէն ալմըշ օլտըղըն թօք
լարը մուհաֆազա իթմէմիլլէր: պու-
սէպէպլէ մէղքիւր թօրլար եհնի
տէն ինկիլիլլէրին էլլին կէշմիշ:

— Ումուլ խրիսթիյանլարըն
մուհաֆազա իշիւն միւթէլլէրիլ
իթմիլլէրին ինկիլիլլէր-պօէր մուհա-
րէպէսինէ նիհայլէթ վէրմէք իշիւն
պիր տալթիլլէրին նէշի իթմիշ տիր:
Մէղքիւր տալթիլլէրին Ալման վէ Հո-
լանտալը պաշ րահիլլէրտէն վէ վա-
իլլէրտէն իմզալանմըշ օլուպ, ին-
կիլիլլէրին ճէնուպի Աֆրիգատա

Պօէրլէրէ գարըն իճրա իթմիլլէ-
րի պիր թաղըմ ուլիոնսըղ վէ
ատալլէթ ու ինսանիլլէթ մուղա-
լիր հարէքէթիլլէրին թաաաաա
իթմէքտէ տիր:

ՄԻԻԹԷՆԷՎԻՅԷ

Ամբիկա ասքէրլէրի Մանիաաա
պիր մահաէն պուլտըլար: Իշիւնտէ
զինհիլլէրին ինսան քէմիլլէրի,
պաղըլարը խաշ իւզէրինէ մըլա-
լանմըշ, վէ նիհայլէթ մահաէնին
այրը պիր օտաաընտա ինսանլարը
իսթէնճէ ալթընա ալմագ իշիւն
պիր չօգ ալէաթ տախի պուլընտը:
Տէրիսաթըր օլընտըղընա կէօրէ՝
1896 տաա ատանըն Սպանիօլ վա-
լիսի Սարթէնթօ պիր կիճէտէ բօ-
լիթիգա մահպուսլարընտան 60
քիշի պիր մահաէնէ տօլտուրմուշ
ըտը: Ֆէվլէլաաա իսթէնճէլէր իճ-
րա օլընտըղը տախի պուլ եօլտա
թէպէլիւն օլընլօր Պրալօ՝ Սպան-
իօլար (.):

ԻՐԱՆԻՈՒՆՔԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Ամբիկայի մեղ պարտք ունեցող
բաժանորդներուն մէջմէկ երկտողով ի-
մացուցած էինք իրենց հաշիւները,
խնդրելով որ փութացնեն բաժնեգին-
ները: Անգամ մըն ալ կը յիշեցնենք
որ դրամները մընի onslուով պէտք է
ղրկել մեզ:

— Տ. Ա. Բ., Սօֆիա. — Ստացանք
վեց ֆրանքը:

ԾԱԽՈՒ ԳԻՐԳԵՐ

ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ կամ ՄՐՄՈՒՋ ՀԱՅ-
ԿԱՅԱՆ: Այս երգարանը Բ. անգամ
տպագրուելով աւելի ճոխացած ու բա-
րեփոխուած է, եւ հակառակ գնոյն
աժանութեանը կը պարունակէ աղ-
գային հին ու նոր գրքիլլէր: Բոլոր եր-
գերը: Գին 1 ձր.

ՆԷՏԱ կամ ՄՐՄԻՍ ՊԱՏԱՍԽԱՆ,
Պուլկարիոյ աղաաթիլլէրին առաջ
Պուլկար Ժողովուրդին Թուրքերէ կը-
րած տաապանքները ու անոնց նիստ
ու կացը կը պատկերացնէ:
Գին 50 ՍԱՆԹ.

ՀԱՅԲԵՆԻԳԻ ԶՈՂՆԵՐ: Պատկեր մը
Տաճկահայաստանի իրական կեանքէն,
գրեց Ղ. Նահապետեան:
Զեղչեալ Գին 1 ձր.

Այս գիրքերը ստանալու համար
պէտք է դիմել Իրաւունքի խմբագրու-
թեան, բոսթի ծախքը 10 ալան
սանթիմ միատեղ զրկելով: Իսկ գիր-
քերու արթէքին համար, եթէ ուրիշ
գիւրութիւններ պակսին, կընդունուի
նամակագրօշմ 10 0/0 զեղչով:

Յ. Վ. ՃԱՆԿԻԼԵԱՆ Յանձնախաւար

Պատիւ ունիմ պատ. աղ-
գայնոց յայտարարելու թէ՛ Վառնայի,
Շուսլայի եւ Ռուսլուքի մէջ յանձնա-
կատարութեան երթեւեկութեան սկսած
եմ, անպայման վառանքիւն, ապ-
րանքներու գինները խիստ զեւրամատ-
չելի եւ յանձնարարութիւնները պիտի
կատարուին արագ եւ շատ ճշգրտութեամբ:
Հասցէ՝

Յ. Վ. ՃԱՆԿԻԼԵԱՆ

Իսկ Ռուսլուք մեր կեդրոնատեղին է
Գալֆան եղբարց խանութը:

Одговорник Н. Драгулев

Печ на Хр. Н. Войниковъ—Варна